

3-4

(210-211)  
Մարտ-ապրիլ 2024

ԾԻՐԱԿԻ ԱՇԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՇԱՊԱՏԿԵՐԸ ԱՎ. ԻՍԱԶԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵԴՈՒՄ

Ազգագրագետի համար մեծ նշանակություն ունի հատկապես կենցաղամշակութային այն ֆոնը, որտեղ կատարվում է Եճ իրադարձությունները, կերպարներին շրջապատող կենսոլորտը, բնական ու մշակութային նիշավայրը: Սովորաբար այն վերարտադրվում է մեծ հավաստիությամբ և դրան նպաստում է այն հաճախանքը, որ տաղանդավոր արվեստագետը ավելի դիտողունակ է, ավելի շատ նրբություններ է նկատում, քան շարքային դիտորդը:

Դրսնորումներով: Ազգագրական նյութը գերազանցապես վերաբերում է օյնուական կենցաղի որը մանկական ու պատանեկան հիշողությունների հիմնա վրա ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Վարպետը:

«Ուստա Կառո» վեաը Ավետիքի հսահակյամի կյանքի գիրքը է, ինչպես ինքն է ասում «ի կյանքու ու սերու ու մեծադիր հաճույք», որի վրա հեղինակ աշխատել է մինչև իր կյանքը Վերջո: Վեաի երկու տարբերակները որուել են հսահակյամո. որոնցից

Աղյօլրագիտական գրականության մեջ բազմիցս արծարծվել է գեղարվեստական գրականության որպես պատմական սկզբնաղբյուրի թեման, ինչը ի վերջո բերել է այն համոզման, որ գեղարվեստական գրականությունը մեծ արժեք կարող է ներկայացնել ժամանակաշրջանի մշակույթի, կենցաղի, բարքերի ու սովորույթների, հասարակական մտքի պատմություն ուսումնասիրելիս: Ըստ այդմ ակնհայտ է դառնում, որ ազգագրության համար գեղարվեստական գրականությունը այլ սկզբնաղբյուրների հետ դառնում է արժեքավոր և բավական հավասար սկզբնաղբյուր:

Հայ ազգագործության մեջ գրականության դերը առաջինը կարևորել է անվանի ազգագործությունը՝ կոչվելով «Հայոց ազգագրական իրողությունները իբրև գրական նյութ օգտագործվել են շատ գեղարվեստական ստեղծագործություններում։ Այդ ձևով մեծ քանակությանը նյութեր են օգտագործել Խ. Արովյանը, Պ. Պոռշյանը, Ռաֆֆին և ուրիշներ։ Վերջիններիս աղբյուրագիտական վերլուծությունը իրականաց-

թել են հետազոյն Ա. Պետրոսյանը և Ռ. Նահապետյանը, որոնք մի շաբթ ուշագրավ հոդվածներ են հրատարակել այդ հեղինակների աշխատանքներում առկա ազգագրական նյութի վերաբերյալ: Յովի Թումանյանի գրական ժառանգության մեջ ազգագրա-

կան նյութերի ուսումնասիրությամբ զքաղվել են Կ. Մելիք-Փաշայանը, Ք. Դարությունյանը: Մ. Արմենի «Հեղնար Աղբյուրը» վեպը որպես Ալեքսանդրապոլի ազգագրության սկզբնաղյուր ուսումնասիրվել է մեր կողմից:

տուրքունը Աղ. Մխիթարյանցի «Փշանքներ Շիրակի ամբարներից» երկն է, որտեղ կենցաղի ու մշակույթի ոչ բոլոր դրույթներն են ոնդորված:

«Ուստա Կարո» վեպում  
գեղարվեստորեն վերարտադրված է Կարսի մարզի կամ Արևածագը հիմքում բարձրացնելու մասին պատմությունը՝ բարձրացնելու մասին պատմությունը, ուստի առաջնահարցը կամ մշակույթը, մասնավորապես գրալունքները, հագուստը, ուստեստը, բնակարանի կառուցվածքն ու դրա ներքին հարդարումը, ընտանեկան կենցաղը ու ծիսակարգը, ընտանեկան ու համայնական փոխհարաբերությունները, տղամարդկանց խնջույքներն ու դրանց արարողակարգը, կենացները և այլք: Չատ հետաքրքիր է ներկայացված քաղաքացի/գյումրեցի-գյուղացի հակամարտությունը, որը կարևոր է հատկապես այն առօնով, որ ավելի շատ պատմություններ կան գյումրեցիների կողմից գյուղացիներին ծաղրի ենթարկելու և խարելու մասին, իսկ հակառակը՝ ոչ: Այս առօնով վեպի հիշյալ դրվագը կարելի է համարել եզակի և ուշագրավ դեպքը:

Վերոհիշյալ ու ազգագրության համար արթեքավոր այլ իրողությունների շարքում, սակայն, ուզում ենք կանգ առնել Շիրակի բնակչության առաջնային արտադրության մաս կազմող գյուղական արիեստների ու ավանդական տոնաշարից սր Գևորգի տոնի Վերլուծության վրա, որոնք մանրամասնությամբ նկարագրված են Վեպի առաջին Գլուխսներ «Ուստա Կարո» վեպից հրատարակության մեջ:

**Գյուղական արհեստներն ու  
արհեստավորները**

Արիեսաների մասին խոսւթիւն  
հարկ է նկատի ունենալ այն հան-  
գանանքը, որ Շիրակի վարչա-  
կան կենտրոն Ալեքսանդրապոլ-  
քաղաքը, որը տարածաշրջանի  
կարևոր առևտուր-արիեսանվո-  
րական կենտրոնն էր, որոշակի

ազդեցություն է ունեցել նաև գյուղական բնակչության վրա: Քանի որ այն հայտնի էր իր հարուստ արիեստավորական ավանդույթներով, ուստի թե՛ մասնագիտական գրականության մեջ, թե՛ ազգագրական տարբեր նյութերում ու առյուղներում նկարագրված են հենց քաղաքային արիեստները: Մինչդեռ քաղաքային ու գյուղական արիեստները հստակ տարանջատվուն են՝ դրսկորելով մի շարք առանձնահատկություններ:

Ուստա Կարոն գյուղական  
արհեստավորի տիպական կեր-  
պար է և համապատասխանում


ի հեղինակի կողմից առանձ-նացված «Ծարժական վարձկան արհեստավոր» տիպին, «որը շրջում է ընտանիքից ընտանիք և իրաքանչիրի համար կարծ ժամանակամիջոցում կատարում է պահանջուած գործը: Ընտանիքը տալիս է նրան հրամ նիւթեր և հարկաւոր միջոցները (օր.՝ փայտը, ածուխը) և ընտանիքի աշքի առաջ կատարում է նա իր գործը: Եւ որովհետև այդ գործը զլխաւորապես գյուղերուն է տարածուած, ուր ապրուատի անհրաժեշտ ախոռյալները (հացը, պանիրը, գինին...) առատ են, ուստի սովորաբար մի ընտանիքի մեջ գործ կատարող արհեստաւորը ստանում է իր ուտելիքը և խմելիքը: Գործը վերջացնելով, ստանում է իր վարձը, որ շատ անգամ բաղկացած է զանազան նիւթերից (ուրեմն ոչ փող) և հեռանում է՝ մի ուրիշ ընտանիքում գործ գտնելու»:

Ուստա Կարոն այն քիչ արհես-  
տավորներից էր, որ տիրապե-  
տում էր մի քանի արհեստի, ինչ-  
պես Խասակյանն է գործ, ոս  
«հազարարհեստ մարդ» էր, որ  
«հիմնավորապես սովորեց որմ-  
նադրության բոլոր արհեստը-  
քար տաշել, քանոքակ անել, պատ  
շարել, կամար կապել, և դարձավ  
Վարպետ»: Պետք է նշել, որ ընդ-  
հանրապես մի քանի արհեստի  
հմտությունների տիրապետու-  
մը բնութագրական է գյուղական  
Վարպետների համար, չնայած  
քաղաքացին արհեստավորների  
մեջ ևս կամորիկուն են մի քանի

Ուստա Կարոն որպես հավաքական կերպար, Անրկայացնում է նաև բնակչության մեջ արիետավորի նկատմամբ ընդգծված հարգարժան վերաբերնունքը, նրա բարձր սոցիալական դերն ու նշանակությունը գյուղական համայնքի կյանքում, ինչն առաջին հերթին արտահայտվում է շատերի քավոր/կնքահայր լինելու իրողության մեջ, որը հայոց ավանդական ընտանեկան կենցացողում կարևորագույն դերակատառում ունեն:

Արեհասավորի համար բնութագրական նյուու հատկանիշը, որ տեսնում ենք հերոսի կերպարում, ինքնահավանությունը կամ մեծախսությունը է: «Ինձ օնան օրեան շինող, օջախ կապող, կարմունջ քցող, աղբյուր հանող վարպետ արևերից-արևմուտք չի գտնվի», - իրավլունքով այսպես վկայում են իր ճամփի Ուստան...»:

Իսահալյանի խորաթափանց աշքից չի վրիպել արիեստավորական մեկ այլ ավանդույթ՝ Վարպետների ժամանցի հիմնական ծևերից ամենասիրվածը՝ ուտելի խմելը կամ խնջույքների մասնակցությունը։ Եթե քաղաքային



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

**ՈՒՍՏԱ ԿԱՐՈ**

արհեստավորների հավաքների հիմնական վայրը համբարձութեան ակունք-սրճարաններն էին, իսկ ընկերակիցները հրենց նման վարպետները, ապա օյուղում դրանք կազմում էին գյուղական հասարակության տարրեր խավերը: Կարևորելով այս ստվերույթը՝ որպես արհեստավորին բնորոշող հատկանիշ, հսահակյանը Ուստա Կարոյի կերպարը ներկայացնում է ինչպես առօրյա կերուխումի, այնպես էլ տարրեր առիթներով կազմակերպված խնջույքների միջավայրում:

Վերջին բնութագրական  
երևույթը արհեստներին ուղղված է նաև անդրադարձել է վեպի հեղինակը։ Ընդհանրապես, բոլոր արհեստավորները, յուրաքանչյուր նոր գործ սկսելուց առաջ հաջողություն ապահովող ժիսական արարողություն էին

Կատարում, որն ուղեկցվում էր որոշակի խոսքային բանաձևով կամ աղոթքով: Բնական է, որ Ուստա Կարոն չէր կարող չպահպանել այդ ավանդույթը, որի նկարագրությունը տեսնում ենք Վեպի «Բուլիկենց ամբարը և Ղանդահարի բազարը» գլխում: Այսպես ամբարի հիմնաքարերը դնելուց առաջ «Ուստան երեսը խաչակնքեց, Տեփանոսը ցորենի հատիկները շաղ տվեց խամատի մեջ, սրտում լուր աղոթելով: Ապա Ուստայի հետ դրին հիմքի անկյունա-

Քարերը: Ամեն կողմից ծայր տվին բարեմաղթանքները.- Տեփանո՞ս ջան, բարով-խեռով ամքար էնի, աղոքար սրտով վայելսա... -Անքարդ լիքն էնի, աստված քեզի տա, դու է՛ ուրիշին»: Նման բարեմաղթությունները շարունակվում էին նաև աշխատանքի սկզբին ու ավարտին կազմակերպվող հացկերույթների ընթացքում կենաց-

## ԱԵՐԻ ՃՆՈՎ:

## **Սուլբ Գևորգի տոնն ու ուխ- տագնացությունը**

Իսահակյանը ամենավառ  
գույներով նկարագրել է նաև Սբ

Գևորգի տոնակատարությունն ու դրա շրջանակում կատարվող ուխտագնացությունը: Յայց ավանդական տոնացույցում Արք Գևորգի տոնն ու այդ սրբին նվիրված ուխտագնացությունը ներկայացված են, սակայն Ծիրակյան տոնակատարության մասին ոչինչ չկա: Այդ մասին չի խոսում նաև Աղ. Մխիթարյանցը: Ք. Խառատյանի աշխատության մեջ թեև հիշատակվում է, որ այս տոնը Ծիրակում իրականացվել է, բայց թե ինչպես չի նկարագրվում: Ըստ Խահակյանի՝ «Արք Գևորգի տոնը կատարվել է սեպտեմբերի 25-ից հիկունեմբերի 1-ը ընկնող շաբաթ օրը և նախորդել է Վարագա խաչի տոնին, [...]բայց ժողովուրդը ուխտագնացությունը կա-

տարում էր հոկտեմբերի վերջին,  
երբ դաշտային երկրագործական  
աշխատանքներն ավարտված  
էին լինում։  
«Կարսի հայոց բանահյուսա-  
կան մշակույթը» աշխատության  
մեջ մաճրամասն ներկայացված  
է տոնակատարությունն այսպես։  
«Ուստագնացությունը ղեպի  
Սուլր Գևորգ տեղի էր ունենում  
աշնանը՝ «Սուլր Խեցին», մոտա-  
վորապես սեպտեմբերի 5-15։ Այն-  
տեղ էին հավաքվում բազմահա-  
զար հայեր Արևելյան և Արևմտյան  
Հայաստանից։ Վաղ առավոտյան,  
գեղեցիկ եզները լծած սայլերին,  
փոշնիկները, զանգուլակները  
և բոժնչները զգներին կախած՝  
շարժվում էին ղեպի Նախիջևան  
և ապա՝ Բագրատան՝ Սուլր Գևորգի

գերեզմանը համբուրելու: Ախորյան  
գետի ծորաբերանի քար-  
ծունքի վրա կառուցված է Գևորգ  
Մարգարեանունու վանքը, որի (ու-  
պի Անի) պատի տակ թաղված  
է Սուրբ Գևորգը: Վանքի շուրջը՝  
մոտ 10 հեկտար տարածության  
վրա, վառվում էին Կրակները, և  
եփվում էր մատաղը: Անենուրեք  
նվազ, երգ ու պար, զվարճութ-  
յուն էր, մանավանդ նորահարս  
ունեցողների մոտ: Աչքի էին ընկ-  
նում գյումբեցիները՝ իրենց նվա-  
գով, պարով ու քեֆով, զուգված  
ու զարդարված ֆայտոններով:  
Սա կարելի է համարել Ուստա  
Կարո վեախ «Բագրանի ուստո՞»  
գլխի կրօնատ տարբերակը, ինը  
վկայում է որպէս որպես ազգագրա-  
կան սկզբնաշրջուրի բացարձակ

## արժանահավատությունը

Իսահակյանն, անշուշտ, ավելի ամբողջական է պատկերում տոնակատարությունը՝ պայծառ գոյներով ու ազգագրական ճշգրիտ նախրամասներով նկարագրելով դրա առանձին դրվագները, մասնավորապես՝ կայսերական հայոց ազգային հայության պահպանը:

Ժողովրդական խաղերը (ըմբշամարտ), ներկայացումները (լարախսաղաց), երգերը (սիրերգ, կատակերգ), պարերն իրենց տեսակներով ու անուններով, բանահյուսության նմուշներով, տոնավաճառը, հացկերությն ու նատադրը: Հայտնի է, որ ուխտագնացությունը՝ որպես ժողովրդական քրիստոնեության դրսևորման

Կարինե ԲԱԶԵՅԱՆ  
Պատմ. գիտ. թեկնածու



Գերմանիայի դեսպանատան,  
Գյորե Կենտրոնի և Գյումրու «Բեռ-  
լին Արտ» հյուրանոցի նախաձեռ-  
նությամբ ու հրավերով գերմա-  
նահայ գրող Լաուրա Ցվիրտնիան  
վերջերս այցելեց Յայստան և  
գրասերներին ներկայացրեց իր՝  
«Փողոցում մենք ուրիշ անուներ  
ունենք» վեպը:

կիներով պատուհաններ, որոնց  
միջով արևի ճառագայթներն ընկ-  
նում են գորգի վրա: Մահճակա-  
լի խոլորձի նախերով ծածկոցի  
գույնները լվանալուց խունացել  
են, բայց դրանից այնպիսի հոտ է  
գալիս, ասես հենց նոր է չորացել  
մաքուր օդին:

Կարող եմ այդ պահին մտածել սուրբի մասին: «Խոյան տապանը Արարատի վրա է հանգրվանել, դու դա գիտեի՞ց»: Եթու որոշում է բաց պատուհանից հեռանալ:

Խոհանոցում նա դարձկից վերցնում է սրճեփջ, որին, ինչպես հորիցս իմացա, «ջազվե» են

պարի շենք անցել, բայց շինությունները հետզինետ դառնում են ավելի փոքր ու խարխուլ։ Շենքերի շղթաները վերածվում են բլուրների, բետոնը՝ խոտի։ Ինչ-որ պահից այլև շենքեր չեն երևում։ Ես նստած եմ հետևկ նստատե-

ին, իսկ մտքերս սավառնում են իմ առջև սփոփած դեղնավուն գոյսներով չոր-չոր լանջափտի վրայով։ Ի՞նչ է աճում այս դաշտերում, զյուղացիներն այստեղ դարեր շարունակ նույն սերմերն են ցանում, թե՞ ժամանակի ընթացքում դրանք տարբեր են եղել։ Տեսնես որքա՞ն ժամանակ է պետք, որ տունը դառնա հայրենիք։ Զայր նստած է Վարորդի կողքի նստատեղին ու փորձում է բառեր գտնել։ Ենշտ է, իհնա նրա նախադասություններն ավելի սահման են հնչում, քան երեկ, բայց միևնույն է, նա ժամանակ առ ժամանակ կմկնում է։ Ի վերջո շրջվում է դեպի ինձ ու բերանը ծոռում։ «Իսկ դու գիտե՞՞՞ր, որ մարդ կարող է իր մայրենի լեզուն մոռանալ»։

կու թղթադրամ է հանում ու զիշով անում։ Միշտ էլ այդպես է վարպել փողոցում ողորմություն խնդրողների հետ։ Բարեհամբույր այդ ժեստը սովորության ուժ ունեցող պարտավորություն է դարձել։ Դետո աստիճան առ աստիճան բարձրանում-հասնում ենք այն հարթակին, որի վրա վանքն է կառուցված։ Ես ուզում եմ շուրջս նայել, բայց հայրս՝ ձեռքից բռնած, քաշում է ինձ մի ծանր դրամ մոտ։ Եկեղեցու պատերն այնքան հաստ են, որ ներսում թթվածնի պակաս կա, ու օդն էլ ավելի պաղ է։ Փոքրիկ պատուհանից լուսի ընդամենը մի քանի շող է ներս թափանցում։ Զայրս ձեռքս բաց է թողել, բայց իհնա էլ ես նրանից բռնվել։ Մինչ աչքերս դեռ սովորում են մթությանը, նա

ԾԱԿԱՆԵՐԻՆ կտորից իր տոպ-րակն է: Դայրս բարձր մի տեսր է հանում միջից: Կազմը ըրքրված է, էջերը՝ ճշճված: «Քննօքերորդ դասարանի դասագիրքս է, - ասում է նա, - անցյալ շաբաթ եմ գտել պահարանից»: Ես ձեռքս պարզում եմ առաջ, բայց հայրս տեսրը պինդ պահել է ձեռքում: Մատների ծայրերով նա անցնում է տողերի վրայով, հետո նորից շշվում է դեպի իմձ: «Ամբողջ գիշեր բառեր եմ կրկնել»: Ես ուզում եմ ինչ-որ ինչ-որ բան փնտրելով՝ շուրջն է նայում: Այդ պահին ստվերից դեպի մեզ է գալիս Սերգեյն ու մեզ երկու բարակիկ, դեղին մոն փոխանցում: Դայրս ժպտում է ու մոտենում մոնավառության սեղանիկին, գրանից հանում ծխախոտի տուփն ու միջի կրակայրիշով վառում է մոները. նախ՝ իմը, հետո՝ իրենց: Խաչակնքում է ու մոնը խրում մոնավառության սեղանիկի ավագի մեջ: «Այսպես է պետք անել, - ասում է նա, - հոգու

բան ասել, բայց Սերգեյն ինձնից առաջ է ընկնում: Նրա բառերն ու-  
րիշ կերպ են հնչում ավելի կոշտ, կոկորդից արտաքրվող, ու տար-  
բերվում են հորս հնչյուններից: Սերգեյը հորիզոնի ուղղությամբ է  
մատնացուց անում: Նրա ձեռքին  
հետևող աչքերս համկարծ մեծա-  
նում ու կորանում են: Ահա ՆԱՌարատը: Լեռն ամբողջությամբ  
ծածկել է Երկնքի Երևացող հատ-  
վածն ու միայն գագաթի մասում  
է մի փոքր տեղ բողոքում Երկնքի  
կապույտի համար: Չայրս ոչինչ  
չի ասում, լուր նայում է գագա-  
թին: Ու մի պահ ես ել բառեր չեմ  
գտնում: Ի վերջո պայուսակիցս  
հանում են ֆոտոխցիկն ու սկսում

փոկության համար»:

Այս հատուկենու հուչերը, որ  
հայրս պատմել է ինձ իր անց-  
յաի մասին, ես մեկտեղել եմ  
գլխումս, ինչպես ուրիշները նա-  
մականիշներ են հավաքում: Շա-  
տերի համար գուցե անիմաստ,  
իսկ ինձ համար անգին նոնչներ  
են դրանք: Այդ հուշ-նամակա-  
նիշներից մեկի վրա Երուսաղե-  
մի հայ առաքելական եկեղեցին  
է: Չայրս մի քանի տարի ապրել  
ու ստորել է Երուսաղեմի Յայոց  
Պատրիարքարանի ժառանգավորաց  
գիշերօրիկ Վարժարանում: Պատ-  
րկերացնում էի նրան փոքր  
հասակում, սև պատմուճանի վրա  
վերևից ներքև մեղրանոմի լաքա-

ԼԱՍՏՐԱ ՑՎԻՐՏՆԻԱ

ԴՐԱՄՈՒՄ ՄԵՐ ԱՆՈՒՆՆԵՐՆ  
ՈՒՐԻՇ ԵՆ  
/հատված/

Կառլմ

Բարձր ձայներն արբանացնում  
են ինձ: Թարթում են աչքերս, ու  
մի քանի վայրկյան անց են միայն  
ընկալում սենյակի առանձին  
հատվածներն ամբողջության մեջ.  
տեղ-տեղ պղտոր, տեղ-տեղ բա-  
փանցիկ բազմաթիվ մանր ապա-

մոտ յուղաներկով պատկերված կտավներում: Օդանավակայանից քաղաք տանող ճանապարհին մենք տաքսիով անցանք մի հսկայական գովազդային պատարի կողըռով: Վրան Արարատ լեռն էր ու մի շիշ օդի:

Դայրս հանդիմանող հայց-





## ԾԱՂԻԿՆԵՐ ԺՎԱՆԱՎԿԻ ՁՅԱՆՎՐԱ

2024 թ. մարտի 4-ին փիլիստիկա-գիտնական, բանաստեղծ ԿԱՐՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ կողմանար 100 տարեկան:

«Ծաղիկներ» ժամանակի ծյան վրա» բանաստեղծությունների ծաղկաբաղը յուրահատուկ նվեր է ընթերցողին այս արիթրու: Սա հեղինակի քվիլ ինքնարդություն ավետող ությակով:

Գրքում ներառված բանաստեղծություններն այսօր են արդիական են (թեև որոշ մասս գրվել է շուրջ ություն տարի առաջ), որն էլ բանաստեղծի անուրանալի տաղանդի վկայություն է:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ  
(Գրքի առաջաբանը)

Ժամանակը զգայաշափ է դրված բանաստեղծություն զարմանալի երևոյթի զարկերակին. բանաստեղծության ապելչապելը որոշող միջմայն ժամանակ-զգայաշափն է: Բանաստեղծությունը ծնվելու պահին որքան էլ գոհացնի իր ընթերցողին, որքան էլ դիմերամբներ հնչեն նրա հասցեին, միևնույն է, ժամանակ է պետք, որ համոզվենք նրա կենսականության մեջ:

Բանաստեղծ, փիլիստիկա Կարապետ Յովսեփյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ծաղկաբաղի 100 բանաստեղծություններն ընտրելիս միտուն է եղել ներկայացնել յուրաքանչյուր բանաստեղծության ծննդյան ժամանակը, միտուն, որով ավելի կը լրացնի եղինակի աստվածներա շնորհի չափը:

Խոսք համոզիչ լինելու համար մեջքերներ մի հատված «Տրտություն» բանաստեղծությունից:

Որքան տիսուր է աշունը դեղին,

Որքան ճնշող է նվազոք քամու,

Անես ծառերից կարում է լեղին

Ու դաշար, դանդաղ սրտին մեջ քամու...

Աշունը նկարագրող մի չքնան բանաստեղծական պատկեր, որը կիմայի ցանկացած ճաշակի ընթերցողի: Իսկ եթե այս տողերի տակ դնենք թվագրությունը (1939թ)... ի՞նչ կստացի: 15-ամյա հեղինակը 85 տարի առաջ գրել է մի բանաստեղծություն, որը բարձ է ու շարժունակ, որն ապում է և դեռ ապելու է ժամանակի հոլովություն:

Եվ այսպես քանի օրինակ կարելի է բերել:

Կարապետ Յովսեփյանի տաղանդավոր գոիշը նաև քառ-

յակներ է արարել: Ժամանակի քննությունն անցած ու հաղթած քայլակները շատ են, և մենք որոշեցինք բոլոր ընտրվածները դիմում մեկ միավոր, որպեսզի և պահպանեն 100 բանաստեղծության սկզբունքը, և ավելի շատ գործեր ընդգրկվեն այս հաջողական ժողովածուի մեջ:

Սիրելի՝ ընթերցող, ահա թեզ հարյուր ծաղիկ՝ ժամանակի ծյան վկա:

Բարի ընթերցում մաղեթ-լով՝ հակիրծ խոսք ավարտեան հովտիյանական մի չքնան և աշխարհից շարունակ պակասող բարությունն ավետող ությակով:

Յայր առավոտ դուռը բաց անում եվ շնչում եր՝ մարդիկ, բարի լոյս...


Յիմա էլ ես եմ նոյն բանը անում, Յետո նոր՝ դնում ոտքս շեմից դուրս:

Ու խորհում եմ դեռ՝ հավատով աղոտ,

Որ գուց կյանքում կտիրեր բարին,

Եթե ամեն մարդ, ամեն առավոտ բարի ողջունով դիմեր աշխարհին...

Անդրանիկ  
ԿԱՐՄԱՆՅԱՆ



## ԿԱՐՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

### ԳԻՇԵՐԵՐԳ

Ուշ երեկոյին կուտեմ միայնակ քայլել առվակի ծանոր եղերով, նստել ծաղկազարդ խնձորեն տակ

Ու տարվել քնքուշ իմ երազներով:

Իմ դեմ կրացվի երկինքը անհուն՝ Փռած վառվուն գորգը աստղերի:

Կարմագոյն ծովում լուսինը անքուն Կլողա ինչպես լուսաշող փերի:

Ուզում եմ բռնել, համբուրել անհազ

Խավարում լուսնի շողիկը քնքուշ, Որը փայլում է առվի մեջ բարակ, Մթին թիկերում կարկաչում անուշ:

Ուզում եմ սուզվել հեգանազ արտում,

Ճնշել խոտերի նըրահոս բույրը, Որ հովս էլ շնկա գիշերվա մնում Ու շուրթերիս տա իր զով համ- բույրը:

Գիշերն եմ սիրում, ցերեկվա նման իր խորտումով, հույգերով անմար.

Թեաւտ քնած է թվում ամեն բան, Բայց մշտարուն է բնությունը մաշող:

## ԳԱՐՆԱՆ ԵՐԿԻՆ-ՔԸ

Գարնան երկինքը երբեմն անփայլ,

Ծալ-ծալ կուտակված ամպերով մրին,

Ներքս է կախվում հայացքով մրայլ

Ու արտասելով գլորվում գետնին:

Սուր ամպերի մեջ շամբերը

դեղին,

Նանան իրեղեն բարակ օձերի,

Բեկովով գծերով շողում են ուժգին,

Ու դորոդում է որոտն ամենի:

Սուր ամպերի մեջ շամբերը

դեղին,

Երբեմն ինսեմ մենք մենք արեցած

Ամուշ ծառերի արանքներից

Ազգ վառվի երկնքում,

Ու լուսինը հալվի նորից

Արեգակի շերմ գրկում:

Ամուշ աղջիկ, առուն անքուն

Ու լուսինը լուսերն են

Ամուշ աղջիկ, առուն անքուն

Սիրուն աղջիկ, առուն անքուն

Ամուշ աղջիկ, առուն անքուն

## ՀԵՇԱՆԱԼ. ՄՆԱԼ. ՍՊՐԵԼ

անթոլիգիայի շնորհանդես




**Մանուկ ԺԱԺՈՅՑՅԱՆ  
(1963 - 1997)**

Ծնվել է ՀԽՍՀ Լեմինական քաղաքում (այժմ՝ Գյուղմի): Սովորել է Դոմի Ռոստովի համալսարանում: Ավարտել է Մովսեսյան Ս. Գորկու անվան գրականության ինստիտուտի գեղարվեստական բարձրագույն բաժնում (1990թ.):

Դասավանդել է դպրոցում, Հունանիտար քրիստոնեական լիցեյում:

1992 թվականից ապրել է Ֆրանսիայում, եղել է «Ռուսական միտք» թերթի գրական մեկնարան: Բանաստեղծական ժողովածուների հեղինակ է. «Ընտիր» (Փարիզ, Industria, 1997): Տպագրել է բանաստեղծություններ «Նոր երիտասարդություն» (թիվ 17, 1996 թ.), «Ստեռոսկոպ» (թիվ 17, 1997 թ.) անագրերում:

Որպես քննադատ և էսեիստ համագործակցել է «Ռուսական միտք» շաբաթաթերթին: «Օրփեոս գործը» գիրքը լույս է տեսել հետմահու: «Բանաստեղծություններ, էսեներ, ակնարկներ, օրագրեր» (Սանկտ Պետերբուրգ, «Զվերգա» ամսագրի հրատարակություն, 2000թ.): Հեղինակ է բազմաթիվ քննադատական և հրապարակախոսական հոդվածների, էսեների, թարգմանությունների հայ պոեզիայից: 1997թ. Սանկտ Պետերբուրգում, ուր ստիպված էր գալ ֆրանսիական վիզայի երկարաձգման համար, ընթերցումների հիման վրա:



Սարտի 21-ին՝ Պոեզիայի համաշխարհային օրը, Գյուղու գեղագիտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ Այտի. Օստայք. Ժիշտ: Անթոլոգիայի շնորհանդես:

Հիշյալ անթոլոգիան հուշային հրատարակություն է մվիրված 20-րդ դարի երկրորդ կեսին - 21-րդ դարի սկզբին կյանքից վարաժամ հեռացած երիտասարդ բանաստեղծներին: Այն պարբերաբար լույս է տեսնում 2016 թվականից: Անթոլոգիայի գաղափարն առաջացել է «Նրանք գնացին» գրական ընթերցումների հիման վրա:

Գրի կազմողներ բանաստեղծ Բորիս Կուտենկովը, բանաստեղծ, թարգմանիչ Նիկոլայ Միջեշկինը, ինչպես նաև բանաստեղծ, գրականագետ Ելենա Կուկինան խստեցին անթոլոգիայում տպագրված հեղինակների մասին:

### ՏԱՏԻԿ

Դու թաքնվել էիր ցորենի համերում:

Ես մեն-մենակ էի:  
Զարիթափ ժայռերի ու ճերմակ գագաթների մեջ,  
Ավելի ճիշտ՝ բլուրների՝ մոտ 120 մետր,  
Որոնց ստվերների պտույտից խավար էր իշնում:  
Դու թաքնվել էիր: Ես ուր տարեկան էի:

Խավարը հինգ րոպեում փոխակերպեց լույսի Եվ թափում էր ներքու քաղաքատիկ ավանի վրա Կանխարգելելու հարբումը: Դա որ խաղն էր, տան, ին վախով և ին սարով, ին ուշացած թվական խոսքով, Որտեղ դեռ անձանոր է Կիրկեգորի վախը,

Որտեղ դեռ գրկում ու դեռ տանում են ձեռքերի վրա Եվ մածուն են ծորացնում այրված ուսերին:

Այս ամենը երկնային ընծաներ էին, Արյունական կապ ընդուն շղփար Եվ ծերունական հմայախոսություն ցրտի դեմ: Երբ դու դողում էիր վերարկուի մեջ՝ Անհայտ ժամանակների Դեկտեմբերյան ցրտից սարած մեքենայում, Միջն այն վայրկանը,

Երբ կցնցվի քաղաքը, ինչպես հարկն է:

Չէ, չեմ լալիս ես, որ ցնցվեց քաղաքը մեր  
Ամսվա 1-ին ...ավելի ճիշտ՝ 7-ին: Չէ, լալիս եմ, որ ճար առաջացավ նրանց միջև այնտեղ, Որտեղ իմ նամկուրյուն է, և որտեղ խավարն է, Որտեղ մենք միասին ենք, և որտեղ մենակ եմ ես:



**Յակով ԲՈՒՆԻՆՈՎԻՉ  
(1962-1994)**

Ծնվել է Մինսկում: Ավարտել է Մինսկի ռադիոտեխնիկական ինստիտուտը, ծրագրավորությունը է աշխատուել նախագծային կազմակերպման և կառավարման տեխնոլոգիական կազմակերպությունում՝ «Կազմակերպման և կառավարման տեխնոլոգիական կենտրոնական գիտահետազոտական նախագծման տեխնոլոգիական ինստիտուտում»:

Տեղափոխվելով Մոսկվա փորձում է ընդունվել Թատերական արվեստի պետական ինստիտուտում՝ Անաստովի Կասիլի ռեժիսուրայի կուրսը, սակայն քննության ժամանակ վարպետի հետ վիճել է ժամանակակից թատրոնի ուղիների շուրջ, վերցուել է փաստաթերթն ու տեղափոխվել թատերագիտության ֆակուլտետ: Ինստիտուտն ավարտելուց հետո որպես թրավակից աշխատել է «Թատրոն» ամսագրում: Չրջել է ԽՍՀՄ-ով մենք և գրել հոդվածներ բազմաթիվ ներկայացումների մասին:

Մահացել է քնի մեջ՝ սրտի կանգից: Միակ գիրքը լույս է տեսել 1999 թ. Մինսկի «Խաղեժդա» հրատարակչությունում:

\*\*\*

Մեն-մենակ եմ սեմյակում.

Միա ես

և բաց պատուհանը

և բաց բույրը,

ճերմակ թերթին

ճերմակ ստիլի է շարվում,

բախծի աննկատ հետք:

Միավելու երկուուղի

ինձ դարձնում է

զգուշավոր-էլեգիական-

երազկոտ,

ավելացնում են բացատ-

վախտնալով

անվերծանելի լինելուց,

ավելորդ բացատ:

Այս բանաստեղծության

տխուր ճակատագիրը

նման է մեր այսօրվա

ժամադրությանը.

մենք շանոնիպեցինք,

որովհետու որու չզանգեցիր ինձ

և չես զանգանությունը մեջ կատարելու հայացքները...

Այս բանաստեղծության

ճակատագիրը

միտք է շանունակում է,

լուսուն գուշուն է լուսուն

և այս անունը մեջ է:

Տիկ այս անունը մեջ է:



## ՀՈՐԵՏԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ (Ծովիք)

Ես անզոր եմ սիրել խսդաղությունը հրապարակի և ռուսախոս լուսնի հողոտ պատանի գլխավերներ, Ես անզոր եմ սիրել հացն հանապազօք և ջուրը, Որով լվաց Պիղատոսն իր ձեռքերը, Ես անզոր եմ սիրել դիակները քայլով՝ կենդանի շիրիմների կողքով, Փոտա՞ծ, փտած արշալուսին Խառնված ծխախոտի Ծիկութնը, և ուղ քրտինքուն ու հրճվախեղ, Ես անզոր եմ սիրել պատուհանդ, Տուն, Որի լուսը մարել են ու հեռացել, և աղաղակը կարմիր, և լուրբյունը սպիտակ... Ես ատում եմ սերը, որ մտածված էր աշխարհ փրկելու, և օրինում վրեժը, որ կործանելու է ատում ին սրբազն... Անզոր եմ, անզոր եմ սիրել ապամոնտաժված հայրենին ու «զյալմաներին», Որ երբեւ հայրենիք ու հայ էին... Չներեք ինձ երբեք... Ես անզոր եղա սիրել Դեր Զորը՝ աշնան ճակատին Ճաքած և հանձնված անկախությունը Անկախության տոնին:

21.09.2023

\*Զյալմա՝ եկվոր (բրու)՝ այսպես են անվանում Խորհրդային Ազրեցանից գաղթած հայերն Ապրենիսի տարածաշրջաններ: Անվանումն ունի փոքր-ինչ բացասական նորերանք:

\*\*\*

Դեմ չե՞ք,  
եթե գրողի ծոցն  
ուղարկեմ  
Դանայան անվերջությանը  
սեր խոստովանած՝  
Երկենցաղի ձեր  
հարուստ,  
իսկ երեմն է՝  
օլիգարխիկ  
ընթացքը...  
(Եթե Գրողը դեմ չլինի)

Դեմ չե՞ք,  
եթե ձեր վերնագիրն արտագրեմ  
բառարանում՝ որպես

«Տարուլա ռազմ»-ի հոմանիշ.  
այդպես մենք քայլով էլ կմոտենաք  
կատարելության ձեր բարձին...  
(սպիտակ աղմուկի պես)

Դեմ չե՞ք,  
եթե վախի երկարահանը  
չճաշկած ձեր քիմքին  
ու երկարահանը  
վառողի հոտով չհաղթահարած

ձեր քիմքն  
մի քիչ սխսոր քսեմ,  
որ վիրուսով չվարակվեք

ու մեր չնչին գոյությունը չխամրի  
ձեր ազնվածին կոշկիների  
ճաճանչափայից...

Դեմ չե՞ք,  
եթե կարավաճոյի պես  
ձեզ Մարդոննա դարձնեմ,  
ու սրբադաւմ

(իսկ Մարդաբան ձեզ ների...):

Դեմ չե՞ք,  
եթե ձեր վերջին բեմելի  
գորեիկ հուշարարը լինեմ  
ու ժամանակից շուտ  
ծափահարեմ...

(չէ, իհարկե, խանդավառած,  
շատ խանդավառված)...  
Դեմ չե՞ք,  
եթե հեռակառավարման  
վահանակով

«Մւե» անեմ ձեր  
սույրանո,  
մեցոստպանո,

կոնտր ալտ,  
տենոր,  
բարիտոն  
բաս

և մնացած բոլոր  
գոյություն չունեցող  
ձայնալարերով  
տատանվող

բրովախոս մտքի էխոներն  
ու լուրբյուն լսեմ մի քիզ...

մի քիզ էլ ...  
մի քիզ էլ ...  
մի քիզ էլ ...

### ԲԼՈԳՍՔԵՐԸ

Մեղավոր է խոնարհումը  
կակաչի  
Ասֆալտների հերիաքներում  
թևակլոր,  
Թափառական արմատների  
երամից  
Թթվերներ են պոկվում ընկնում  
ամեն օր...

Եւ խորտակման այլաշխարհիկ  
տենչերով՝  
Որպես մի կին, մի կրծքաբաց  
սատանա,  
փառքն է կանչում անմատչելի  
ու տտիա,  
իբրև մի տիղմ, իբրև մի կուս  
մահանա...

Թե անհայտի ինչ-որ մի խուլ  
Շամրանքով  
Կամ հմայքով գիշերների  
Կալպուրգյան  
Նա գնում է, նա թիթեռն է  
կեսօրի,  
Ծիխ հոտը՝ նկուղներում  
գինետան...

\*\*\*

Դաշտերի աչքին՝  
անաստովիական

(Երեսպաշտության  
օրացուցերում՝  
մինչ հիմա շնչող),

Շացի հրաշքով՝  
ու գինու այսամբ  
Դեռ կենդանի է  
Մահիկի տունը...

Դեռ թպրտում է  
շեկ մայրամուտը  
Դաշտերի կրծքին...

Ժամանակակից  
հոտերն ոչխարի  
Դեռ որոնում են  
Ցամաքը լուսեն,

Որ համբուրում էր  
Իր կապույտ էգի  
սերներ մարմինն  
Ու խալը ծանուկ,  
Որ չվախենա

Ցնցում են տղերը երկինքը,  
Երկինքը վիպական Շուերի.

Չես պոկի Նեռների տանիքը,  
Լեռները շղայել չի լինի...

Պարետիկ քամուց

Արևելքային.

Մի տեսակ ցանաք,

Մի տեսակ աղի,

Ու չքե՞ր... չքե՞ր...

Եվ համարազների

ծևաբանությամբ՝

Կողդ-կողդի մեռնող,

Դերիաներն անտաշ,

Զեռքից ձեռք անցնող

գեներից հոգնած,

Դարդագրոցվել են

արթացման ճամփին...

և քարարչավ է

հորդում մամերից...

Աղոթիկ պատճառի

սաղմոսագիրը

դուռս կապուտի

իր մագաղաքը

պարավագակ մարմնից

վիզը ջայլամի,

Եվ երը ջերը կազմեն

մտքի միրաժի տենիցից

կիսաշուն առաջ

Անձանոր մի կին

Կքայլի բորիկ

Մինչև անապատ...

Եվ իմերի մեջ

Լուս կօժի յուղով

Լեռների տոքերն

Իր սև մազերով...

\*\*\*

Ցնցում են տղերը երկինքը,  
Երկինքը վիպական Շուերի.

Այդ ո՞ւր ես տանում իմ տանիքը,  
Քարավագակած լեռների...

Այդ ո՞ւր ես պտուղմերն իմ  
տանում

և Պոկում իմ լեզուն Թարթարից,  
Դարձիր գետ, թե տենչում ես  
հեռուն,

Չեն քոչում արմատները ծառից:

Շանթառտք մարտիկներ են  
զարկել

Ու ճայրել թևերիս լեռնակիր,  
Այս հողուն Նժդեհներ են մարտել  
Խոյանքով Վճռական Մենակի:

Ցնցում են տղերը երկինքը,  
Երկինքը վիպական Շուերի.

Չես պոկի Նեռների տանիքը,  
Լեռները շղայել չի լինի...

Պարադոքս է  
Յարցը կախել քամիներից

Ու աղոթել ճոճքի ճռողոցից

պատասխան

ապակուղավորելու համար...

Պարադոքս է

ճնշողուկ փրկել օպերայի բետոնե

լաւակից

ու իրմակն ապերել,

մինչ լեռնային լճերի այրերն են

գերության մեջ

ու փրկող չումեն...

Պարադոքս է

խոտին նստած՝

աջ ականջով ջազ լսել

մոտակա սրճարանից,

իսկ ձախով ազգային ճակատի

կոչերը՝

Ուսու-թուրքական դավադրության

դեմ

Բողոքող միտինգին կանչող...

Պարադոքս է Ստրուկ փնտրող

«Ոխերիմ դաշնակցին»

դարձնել Մեսսիա,

Ոխերիմ թշնամուն շուկայի

հակառակորդ,

իսկ հայրենակցին ոխերիմ

թշնամի միջոցով կանչող...

Պարադոքս է Ասիմետրիկ մտքերի մեջ

Գտնել են են երկխոսել՝

Յանուն արմինից ու ծծումքից հետո



## ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



**ԽԱՅԻԿ  
ՏԵՇԵԿՈՒՆ**

Պեյրուբ

Ո՞Վ ԵՍ, Ո՞Ւ ԵՍ ԴՈՒՆ

**Խնդրեցի զնա՝ եւ ոչ գտի:  
«Երգ երգոց»**

Փնտռեցի քեզի, բայց չգտայ:

Գիշերին երերուն շուրջ կ'որոնեմ,  
Արշալոյսին՝ տեսիլը հաւակնուտ.

Մոլորած թրուպատուրին նման՝  
Անուրջներուն մէջ երեկո  
կը հալածեմ,  
Բայց ան կը փախչի,  
Հալածեալ եղնիկի մը նման:

Իսկ դուն, սիրելին,  
Ոչ երաց ես, ոչ տեսիլ,  
Ոչ սսուեր ես, ոչ խարկանք,  
Պահանջ ես այսօր, երեկո մէջ,  
Հալածանք մը վաղուան  
անուրջներուն մէջ,  
Դուն կաս, անձկուրեանս մէջ  
ու մտքերուս,  
Ծառերուն ետին կորսուած  
լուսնին պէս:

Դուն սիրոյս գիշերն ես  
Ու արեւածագը միհաժամանակ,  
Ռոգին ես ու մարմինս,  
Պատրանքի մը պէս շքեղ,  
Ոգի մըն ես անուրջներուն մէջ,  
Սիշտ տիրող, միշտ ներկայ:

Բացակայութիւնդ անգամ  
Երեւեփող,  
Չին ժամանակներու գրգանքն  
ես,  
Երազն ես,  
Իրական, երազի մը պէս վա՛ռ:

Ո՞Վ ես,  
Ո՞ւ ես դուն,  
Անծանօր ոգի՝ բափառական:

2021

ԱՅԼԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԵԼԻՆԵՐ

Ոչ միայն ես, այլև  
Աշխարհն է խելագարած...  
Երբ հայելին դիմաց կանգնած  
Մենք մենք խոհուն գիտնական  
Կամ սրբակենցաղ վանական  
կը տեսնենք,  
Չենք ուզեր տեսնել, թէ հայելին  
մէջ մենք չենք,  
Այլ խարկանքն է կանգնած հոն,  
Որ այս աշխարհի բախտին  
ու շալակին նստած

Մեզ գովերգող շրջապատին բեմադրուղ կեղծիրն ենք:  
Աշխարհի, հարաբակ մը միջակութեանց,  
Ուր ոչնչութիւնը կը դարնայ տիրակալ,  
Դայելիին մէջ, եւ ոչ միայն...:

Ո՞րն է ցաւալի ու գուեկի նոյնամաց՝  
Խելագարին ծիծաղ առողջ ցարտութիւնը՝ լքը յինար,  
Թէ՞ գոռողին զառանցանքը հայելին դիմաց:  
Մի՞թ տխափախակ հերոսները պատմութեան խեմբեր չէին, կամ վիժուածներ սնափար.

Ի՞նչ է տարբեր մեր օրերուն ապիկար,  
Երբ ազգեր կը շիշին,  
Երկիրներ կը կործանին՝  
Այլակերպող հայելիներուն դիմաց:

2020

ՀԱՄԲՈՅՑՐԻԴ ՀԵՏ

Համբոյրիդ հետ  
Այս գիշեր  
Կրնամ անճահանալ,  
Փակել մատեանը սիրոյ  
Ու անեանալ...

Համբոյրիդ մէջ  
Այս գիշեր  
Կը սուզուին իին սէրերը բոլոր,  
Կիրթերը երեկի,  
Պատրանքները գալիքի  
Ու ցանկութիւնները անիրական  
Կը լուծուն միհանգանայ:

Համբոյրիդ հետ  
Այս գիշեր  
Կ'աւարտին երազները անցեալի,  
Ու կը բացուի լուսաշող հորիզոն մը,  
Երազներէն անդին:

2022

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Կ'ամցնին օրե՛րը,  
Ժամանակները կը փոխուին,  
Իսկ մենք, սիրելին,  
Կը սորվինք համակերպիլ:

Կիման կը փոխուի՝  
Կը հաշտուինք,  
Կը կեղեցն մեզ՝ լուռ  
կը հանակերպինք.  
Տագնապ ու վիշտ՝ կը կրօնեն,  
կը յօշոտեն մեզ:  
Կ'ընդունինք որպէս  
մեզի վիճակուած

Անհերեր խաղը մեր չար  
բախտին,  
Ժամանակի՝ մեր դէմ ունեցած  
Հակակրանքն ու վրէժը  
պարզապէս:  
Վարդուեցանք ակամայ  
կրւ տալ  
Մեր օրերուն ձախորդութիւնները  
բոլոր,  
Մեղքի բաժինը ընծայել ուրիշին:  
Օրերը կ'անցնին, կեանքեր

Կը հիւծին,  
Ուրախ պահերը  
կը դաշնան ժատ,  
Կը համակերպինք ցաւին,  
Կորուստին,  
Յուսախարտութեանց նաեւ,  
Զարցարդումն ու բողոք անգամ  
մէջը սեպելով՝  
Կ'որսանք ռոպէները երանիկ,  
Կը շիշին օր օր, կը սուզուինք  
հոսանքին մէջ,  
Դլու, հիասթափ ու հաշու:

Մեր վիշերգութիւնը գրեցին  
ուրիշներ հօգոր,  
Ծնան հերոսներ կեղծ ու երգեր  
այսանդակ,  
Մեր երգը կորսուեցաւ երերին մէջ  
անյիշաչար:

Ու եթ հարց տան մեր մասին,  
ըստք՝  
Մեր անուն էր համակերպութիւն,  
Մեր կեանքի խորագիրն էր  
հիասթափութիւն,  
Իսկ մեր կոտակն էր հաշտութիւն.  
Մենք վճարեցինք մեր ժամանակի  
մուրիակները բոլոր:

Ու Դադիվանք  
և դեռ ինչպէս կը բարբանցնենք  
օրն ի բուն  
առաստիսնելով  
մեր կոկիկ վերլուծաբանութիւնը  
մենք ինչպէս քուն կը մտնենք  
ամեն գիշեր  
ինչպէս կապրինք ու կուլ  
կու տանք  
արհամարհանք հողին  
արատաւրուած մեր խորձերով  
ու չենք մեռնիր  
մենք ինչպէս կը նայինք  
մէկզմէկու  
աչքերուն  
և ինչպէս պատասխան կու տանք  
մեր բունքներու  
անյիշաչար:

Լեռնագագաթները մերկ են  
անոնց վրայ նստած է ծիւնը  
յաւերժուեն անրիծ  
ու անկաշկանդ  
անոնք կ'ապրին գիտութեամբ  
և անժխտը  
անոնց արցունքը կը սաշի  
վերածուենով յիշողութեան  
որ կը հայած երևակայութիւնը  
սերունդներու

մի հարցներ թէ ինչո՞ւ  
դառնութեամբ լեցուած է տղադ  
լեռնադաշտին լուսուան մէջ  
և կը մերժէ ընդունիլ քեզ  
որպէս իր հարազատ հայրը

քեզ պէտք է շանթահարել  
քու բջջաներդ տրորել ու այրել  
պէտք է  
դուն պիտի դադրիս ուղեղ ու  
մորը ու գոյութիւն ըլլալէ  
դուն պիտի դադրիս ըլլալէ  
չըլլալու

ամեն գարշելի  
կերպարանափոխութեամբ  
դուն որ հրապարակաւ  
կը չքնեղես կասակն ու վեստ  
Սպազիսը  
և բոլոր միւս մատնիչները  
մեր պատմութեան  
որոնք շանսատակ տապալեցան  
արդարահասոյց

մեր գնդակներով  
դուն ընտրած ես  
մաս կազմել անոնց նեխած դիա-  
կին  
ուրեմն դուն այլևս չկաս  
լսեցի՞ր:

լուսնի եղերագծերը  
կը լուծուն իրարու մէջ  
և կը յօրինեն հորիզոններու  
երազանքը  
այս առտու  
լեռները լուռ են

մենք ենք որ ապաստանած ենք  
հրենց անուրջին  
փնտռելով մեր ինքնութիւնը

թշնամին ինչպէս հասաւ հոս  
թշնամին ինչպէս մտաւ  
այս ձորերը  
թշնամին ինչպէս կը խօսի  
բարձրաձայն

լուսուեան այս վեհարանին մէջ

և որո՞նք են այն լայիր  
արարածները՝ որոնք  
կը ժարին անարգել  
լեռներու վսեմ  
երկնախօսութիւնը  
և ի՞նչ մարդեր ենք մենք

մենք ինչպէս յանձնեցինք  
Աստուածներուն կացարանը  
Մուսափիրն մինչև Նեմրութ  
ու Աշտիշատ ու Վարագյան Լեռ

և որո՞ք խաչքարեր  
ԱՌԱ, խաչուած քարեր,  
Բիւր դաշուած քարեր,

Անգին խաչքարեր...  
Մեր աչքին լոյսը,  
Վանքառուն սիւմը,  
Սրտի բորբ յոյզը,  
Դաւատքի բոյնը՝  
Սուրբ Կանքեր քարեր,  
Տանջուած քարերեր...  
Լոիկ, բայց խօսուն...  
Քարեր, բայց փխրուն...  
Նրիկ, բայց մարմար...  
Կանգնած, բայց ճկուն՝  
Փորագիր քարեր,  
Դայակերտ քարեր,  
Բիւրեղ խաչքարեր...  
Անար ու հնար,  
Գերուած ու ազատ,  
Գետմին մէջ գամուած,  
Երկինք խոյացած  
Վեհապաններ քարեր,  
Տարագիր քարեր,  
Լուսեղ խաչքարեր...  
Մարդ ան հնար,  
Գերուած ու ազատ,  
Գետմին մէջ գամուած,  
Երկինք խոյացած  
Վեհապաններ քարեր:  
Անյօթ խաչքարեր:

«Բուրաստան»



**ՓԱՆՈՍ  
ՃԻՐՍՆԵՅՆ**

Մօնրեալ

Աղերսագիր

Ըրէ այնպէս, Տէ՛ր,  
որ սուսոց անոր  
ինձի չհասնի՝  
ինչպէս երեմի պարտէգին մէջն  
սուսոց Աղամին  
չհասաւ քեզի:

Ըրէ այնպէս, Տէ՛ր,  
որ բառը մնայ  
անեղ շրբներուն՝  
ինչպէս Կանայի հրաշագործ  
գինիդ,  
ինչպէս երկինքի  
աստերուն  
մէշէն  
աստղը մսուրիդ:

Ըրէ այնպէս, Տէ՛ր,  
որ իմ քնարիս լարերուն վրայ,  
իմաստութիւնը  
տառապող սրտի,  
քու սաղմուներուն քաղցր  
խորհուրդով  
մերիդիւն հասնի...:

Եջը կազմեց  
Նունե Նիկողոսաւը

**ՏԻՐՈՒԿ  
ԿԱՐԱՊԵՏԵՅՆ  
ՄԱՐԳԱՐԵՅՆ**

Թորոնքո

Աղօքք խաչքարեր  
ԱՌԱ, խաչուած քարեր,  
Բիւր դաշուած քարեր,

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: